ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

Դավիթ Ռոմիկի Մոսինյանի «Պատմության փիլիսոփայական հայեցակերպերի մեթոդաբանական վերլուծություն» ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Թ 00.01 «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ փիլիսոփայական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման

1. Աշխատանքի արդիականությունը

Ատենախոսության արդիականությունը պայմանավորված է պատմությանը մոտենալու տարաբնույթ կերպերի իմաստավորման և համակարգման անհրաժեշտությամբ: Այդ զուտ փիլիսոփայական թեման ձեռք է բերել նաև հավելյալ գաղափարական-քաղաքական նշանակություն՝ շնորհիվ պատմության հետ հարաբերվելու, այն իմաստավորելու, հասարակության մեջ նրա տեղն ու դերը ճշգրտելու հարցի շուրջը հանրապետությունում ծավալված բանավեճերի, որոնք վկայում են «իրական Հայաստանի» և «պատմական Հայաստանի» հղացքների տեսական ճշգրտման և գործնական փոխհարաբերման անհրաժեշտության մասին:

2. Հիմնախնդրի մշակվածությունը

Պատմության փիլիսոփայության եզրույթը սկսել է լայնորեն շրջանառվել 18-րդ դարից սկսյալ: Նրա կարևոր փուլերից է եղել «պատմականության սկզբունքի» ներմուծումը, իսկ նրա դրսևորման գագաթնակետն է դարձել Հեգելի փիլիսոփայությունը: Քսաներորդ դարի ուղղություններից հեղինակն առանձնացրել է Աննալների դպրոցը, «պատումնային շրջադարձը», Ֆուկոյի դիսկուրս-վերլուծությունը և էքզիստենցիալիստական պատմափիլիսոփայությունը:

Այնուամենայնիվ, այստեղ առաջ է գալիս դժվարություն, կապված այն հանգամանքի հետ, որ փիլիսոփայության «հետմետաֆիզիկական» փուլը ներկայացնող մտածողները, որոնք անվստահություն են տածում այսպես կոչված «մեծ պատմությունների» նկատմամբ, խուսափում են «պատմության փիլիսոփայության» հետ կապված խոսույթից: Ոչ բոլորն են ընդունում նաև, որ պատմությանը վերաբերող գոյաբանական, իմացաբանական, արժեքային և այլ տեսանկյունները հնարավոր է տարանջատել և դիտարկել որպես ինքնուրույն հայեցակերպեր: Ինքս կիսում եմ այդ կասկածները և հետևաբար հազվագյուտ եմ անդրադառնում «պատմության փիլիսոփայություն» եզրույթին:

Միևնույն ժամանակ, հասկանալի է, որ այդ հանգամանքը չի կարող կասկածի տակ դնել ատենախոսության մեջ որդեգրված հակառակ մոտեցման օրինավորությունը, արժեքը և գիտականությունը: Կոորդինատների այն համակարգում, որ առավել համոզիչ է ինձ

համար, գրախոսվող ատենախոսության մեջ ծավալվող մոտեցումը կարող ենք դիտել որպես մետափիլիսոփայական հղացք կառուցելու մի փորձ, որի նպատակը գոյություն ունեցող հիմնական տեսությունների հարաբերումն ու դասակարգումն է:

Ամեն դեպքում, սկզբունքային տարաձայնություններին վերաբերող որոշ հարցեր կարծարծվեն ստորև՝ «Դիտողություններ և առաջարկություններ» բաժնում:

3. Հետազոտության նպատակները և խնդիրները

Ատենախոսության նպատակն է վերհանել և նկարագրել պատմության փիլիսոփայական հայեցակերպերը և ենթարկել դրանց մեթոդաբանական վերլուծության: Այդ նպատակին հասնելու համար հեղինակը նախանշել է լուծել հետևյալ խնդիրները.

ա/ որոշարկել պատմության փիլիսոփայական հայեցակարգերը և դասակարգել դրանցից բխող հիմնական փիլիսոփայական խնդիրները,

բ/ ճշտել պատմության, պատմագիտության և պատմության փիլիսոփայության ոլորտների փոխհարաբերությունը,

գ/ տարանջատել այդ հայեցակերպերի պատմական և տրամաբանական հատույթները,

դ/ լուսաբանել պատմության և պատմագիտության փոխհարաբերությունները,

ե/ քննել պատմության իմաստի և պատմական ընթացքի փոխհարաբերության տրամաբանությունը,

զ/ քննական վերլուծության ենթարկել համաշխարհային պատմության հղացքի տարբեր մոտեցումները:

4. Ստացված արդյունքները և ատենախոսության նորույթը

ա/ Պատմության փիլիսոփայական հայեցակերպերի ատենախոսության մեջ իրականացրած համադրությունը հնարավորություն է ստեղծում երկխոսության դաշտ ձևավորել դրանց միջև:

բ/ Պաշտպանվել է այն թեզը, որ պատմությանն առնչվող բոլոր խնդիրները կարող են հանգեցվել գոյաբանական, իմացաբանական, տրամաբանական-բարոյագիտական և սոցիալ-փիլիսոփայական (քաղաքագիտական) հայեցակերպերին;

գ/ Արձանագրվել է, որ պատմության փիլիսոփայության ոլորտի միասնականությունը հնարավոր է որպես նշված չորս հայեցակերպերի դիրքերից իրականացվող երկխոսություն:

դ/ Նշված հայեցակերպերից յուրաքանչյուրն ամբողջական է դառնում մյուս հայեցակերպերի հետ հարաբերության մեջ:

ե/ Հեղինակը եզրակացրել է, որ տարբեր՝ վերլուծական, մայրցամաքային և այլ ուսմունքները համադրելի են դառնում նշված փիլիսոփայական հայեցակերպերի դիտանկյունից:

զ/ Ոչ մի հայեցակերպ ճանաչողական առումով առավելություն չունի մյուսների նկատմամբ:

5. Տեսական և գործնական նշանակությունը

Ատենախոսության արդյունքները կարող են նշանակություն ունենալ պատմության փիլիսոփայության ոլորտի համակարգման և մեթոդաբանական ճշգրտման համար: Դրանք օգտակար կարող են լինել նաև «իրականի» և «պատմականի» հետ կապված բանավեճերում հանրային համաձայության նվաճման համար:

6. Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից (16 ենթագլուխ), եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Ընդհանուր ծավալը 270 էջ է:

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված է նրա մշակվածության աստիճանը, ձևակերպված են հետազոտության նպատակներն ու խնդիրները, նշված են աշխատանքի գիտական նորույթն արտահայտող հիմնական դրույթները, ինչպես նաև ներկայացված է նրա տեսական և գործնական նշանակությունը:

Առաջին՝ «Պատմության գոյաբանական հայեցակերպը. ի՞նչ է պատմությունը» **գլխում** ձևակերպված է չորս խնդիր, որոնց՝ համաձայն հեղինակի, հանգեցվում են գոյաբանական հայեցակերպին վերաբերող բոլոր հարցերը:

«Պատմության ենթական» ենթագլխում ներկայացվում են *պատմության ենթակա* արտահայտության երկու հիմնական իմաստները՝ որպես պատմականացման ենթակա բովանդակություն, և որպես ակտիվ սուբյեկտ, որն ունակ է պատմել իր պատմությունը:

Հաջորդ ենթագլխում քննված է «պատմության և նախապատմության» փոխհարաբերությունը: Նշվում է, որ նախապատմությունը գոյաբանորեն ածանցյալ է պատմությունից: Յուրաքանչյուր պատմության հասկացում պահանջում է նախամիջավայրի ուրվագծում:

Երրորդ ենթագլուխը՝ «Պատմականության մեկնաբանությունները. մոնիզմ և պլյուրալիզմ» քննության է ենթարկում մեկ միասնական պատմության գոյության հարցը՝ մոտեցում, որին հակադրված է պատմության պլյուրալիստական ըմբռնումը:

Առաջին գլխի վերջին ենթագլուխը վերաբերում է «Պատմության պարբերացման խնդրի գոյաբանական հիմքի» հետազոտությանը, որն ըստ հեղինակի կարող է կանխել մեթոդաբանական մակարդակում սխալների ի հայտ գալը:

Երկրորդ գլուխը նվիրված է «Պատմության իմացաբանական հայեցակերպին» և քննում է այն հարցը, թե «ինչպես է հնարավոր պատմությունը»:

Առաջին՝ «Պատմաճանաչողութայն առանձնաատկությունները» ենթագլխում արձանագրվում է, որ պատմական *բացատրությունը* չի կարող լրիվ լինել, եթե այն չի լրացվում հերմենևտիկական *մեկնաբանությամբ:*

Երկրորդ՝ «Պատմական օրենքին» նվիրված ենթագլուխը համեմատության մեջ է դնում *հասկացման* և *բացատրության* հարացույցները, կենտրոնանալով մի կողմից՝ Հեմպել – Դրեյ բանավեճի, մյուսից՝ Կրոչեի և Քոլինգվուդի մոտեցումների վրա:

Հաջորդ ենթագլխում քննվում է «պատմության որպես իրողության» և պատմագրության փոխհարաբերությունը: Առաջադրվում է այն տեսակետը, որ խնդրին մոտենալու երեք հիմնական կերպերը՝ *վերակառուցողական, կառուցողական և ապակառուցողական,* պետք է դիտարկվեն միասնության մեջ:

Երկրորդ գլխի վերջին՝ «պատմության փորձընկալմանը» նվիրված ենթագլխում վերհանվում են ջանքերը, որոնք միտված են դիտարկելու պատմությունը որպես փորձ՝ հիմնականում հենված հոլանդական բներևութաբանական դպրոցի ուսումնասիրությունների վրա:

Ատենախոսության **երրորդ գլուխը** նվիրված է «Պատմության տրամաբանական-բարոյագիտական հայեցակարգին»: Այն հարց է դնում պատմության իմաստի մասին, վերջինս հարաբերության մեջ դնելով մարդկային արարքների հետ: Այս հայեցակերպի հետ կապված նույնպես քննարկվել է չորս հարացույց՝ 1/ «անտիկյան» (առասպելաբանող), 2/ «միջնադարյան», ուր համաշխարհային պատմության հղացքը ձևավորվում է քրիստոնեական հարացույցի շրջանակներում, 3/ «լուսավորական»՝ կապված առաջընթացի սկզբունքի հետ, և 4/ «էքզիստենցիալիստական», որում անցյալը հասանելի է դառնում լոկ պատմության իմաստի ըմբռնման այս կամ այն դիրքից:

Չորրորդ գլխում քննության է ենթարկվել «Պատմության քաղաքագիտական կամ սոցիալ-փիլիսոփայական հայեցակերպը»: Առաջին ենթագլխի «Համաշխարհային պատմության հնարավորության հարցին», հետևել է Արևմուտքի և Արևելքի

աշխարհայացքային յուրահատկությունների վերլուծությունը, որը երկրորդ ենթագլխում իրականացվում է Էդ. Սայիդի *օրիենտալիզմի* հղացքի համատեքստում: Երրորդ՝ «Պատմություն և հիշողություն» ենթագլուխը նվիրված է պատմագիտական հետազոտության մեջ հոգեխոցող հիշողությունների արտացոլման խնդրին, որը բնականաբար, առաջին հերթին նկատի ունի ցեղասպանության պատմագիտական իմաստավորման հարցը: Աշխատանքի ավարտական՝ չորրորդ գլխի չորրորդ ենթագլուխը նվիրված է պատմության ավարտի խնդրին: Նրա կիզակետում Ֆ. Ֆուկույամայի հայտնի հղացքն է, որը առիթ է տալիս նաև Հեգելի և Մարքսի ուսմունքներին անդրադառնալու համար: Պատմության ավարտի հայեցակարգի դիմագրավման ուղին հեղինակը տեսնում է քաղաքագիտական հայեցակերպի համակողմանի վերհանման մեջ:

Ատենախոսությունը եզրափակում են **եզրակացությունները**, որոնց բովանդակությանը անդրադարձել ենք սույն Կարծիքի չորրորդ՝ *Ստացված արդյունքները և ատենախոսության նորույթը* բաժնում:

7. Դիտողություններ և առաջարկություններ

Ինչպես նշվել է վերևում, ատենախոսության մեջ պաշտպանվող որոշ դրույթների հետ իմ տարաձայնությունները պայմանավորված են մոտեցումների տարբերությամբ, հետևաբար ստորև ներկայացված դիտարկումները չեն ենթադրում, որ աշխատանքում դրանց համապատասխան փոփոխություններ պետք է կատարվեն: Հիմնական դիտողություններս հետևյալն են:

ա/ Ինձ կասկածելի է թվում այն թեզը, որ հնարավոր է խոսել պատմության մեջ «բուն խնդրի» մասին (էջ 13)՝ այն համեմատելով պատմության գրության այս կամ այն կերպի (մեկնակետի) հետ: Պատմությունը կա միայն տեքստերի մեջ՝ այն ձևով, որով այն «պատմականացվել է»: Գերմանական պատմական դպրոցի ներմուծած «պատմականության սկզբունքն» անկասկած կարևոր դեր ունի, քանի որ պատմաբանին զերծ է պահում անցյալի հետ միամիտ նույնացումից (պատմության հետ «ախպերջանությունից» - Գադամեր): Բայց, ժամանակակից փիլիսոփայության մեջ այն հաղթահարվել է նույն Հ. Գ. Գադամերի հետազոտությունների շնորհիվ, որը «պատմական գիտակցությանը» հակադրել է «պատմաներգործակցական գիտակցությունը» (Wirkungsgeschichtliches Bewußtsein): Վերջինս ենթադրում է, որ պատմական մոտեցումն ինքնին ի վիճակի չէ թափանցել պատմական տեքստի բովանդակության մեջ: Այդ տեքստից բացի այն պետք է հաշվի առնի նրա ներգործությունների արդյունքում առաջ եկած բազմաթիվ տեքստերի ողջ շղթան, որը և ներկայանում է որպես «պատմական ավանդություն»: Դրանից դուրս պատմական եղելության (հետևաբար և՝ «բուն խնդրի») մասին խոսելն անիմաստ է: Պատմաբանի գիտական օբյեկտիվությունը պայմանավորված է ոչ թե «իրական պատմությունը»

գտնելու կարողությամբ, այլ պատմական ավանդության անշրջանցելիության գիտակցմամբ: Կարծում եմ, աշխատանքը հավելյալ որոշակիություն ձեռք կբերեր, եթե հեղինակը մանրամասն քննության առներ, գուցե նաև քննադատեր (եթե համաձայն չէ) Գադամերի վերոնշյալ թեզը:

բ/ Պատմական օրենքի մասին խոսելիս (ենթագլուխ 2.2), թեև հեղինակը հիշատակել է բացատրության և հասկացման այլընտրանքի գոյությունը, հիմնական ուշադրությունը կենտրոնացրել է Հեմպելի հղացքի վրա, որ գալիս է անալիտիկ փիլիսոփայության դասական շրջանից և այսօր, ըստ էության հնացած է: Որպես հեմպելյան «ընդգրկող օրենքի» (covering low) քննադատներ դիտարկվում են Կրոչեն և Քոլինգվուդը: Բայց հարցը դրանով չի սպառվում: Քննությունից ցավալիորեն դուրս է մնացել բաղենյան դպրոցի առաջարկած բաժանումը՝ նոմոտետիկ և իդիոգրաֆիկ գիտությունների միջև, որոնցից առաջինի հիմքում ընկած է *օրենքների նկարագրությունը*, երկրորդի՝ *հարաբերումը արժեքին:* Մանրամասն անդրադարձն այդ խնդրին ոչ միայն օգտակար կլիներ ճանաչողական և արժեքային մոտեցումների քննության ժամանակ, այլև տեսանելի կդարձներ, որ արժեքային մոտեցումն ինքնին ճանաչողական է:

գ/ Ես չեմ անդրադառնա Հայդեգերի փիլիսոփայության հետ կապված առանձին դրույթներին, սահմանափակվելով որոշ եզրույթների թարգմանության հարցով: Դա պարտավոր եմ անել, քանի որ խոսքն իմ առաջարկած թարգմանությունների մասին է: Հեղինակը Հայդեգերի հիմնարար էքզիստենցիալը՝ Sein-ը («գոյություն») թարգմանել է «լինելություն», որպես փաստարկ նշելով, որ «արևմտահայ միջավայրում» «գոյություն» եզրը օգտագործում են Existenz-ը թարգմանելու համար, իսկ էքզիստենցիալիզմն էլ տարադարձում են որպես «գոյութենապաշտություն»: Ամենայն հարգանքով սփյուռքահայ գործընկերների նկատմամբ, ստիպված եմ արձանագրել, որ նման թարգմանությունը ոչ միայն ճշգրիտ չէ բովանդակային առումով, այլև հղի է հետագա խառնաշփոթով, քանի որ հանգեցնում է «էքզիստենցիալ»-ի և «օնթոլոգիական»-ի նույնացմանը, որն անթույլատրելի է: Տարակուսանք է առաջացնում նաև այն հանգամանքը, որ հեղինակը աշխատանքի 194 էջում մեջբերում է այն նախադասությունը, որով ես փորձել եմ հիմնավորել գոյության և էքզիստենցիայի նույնացման անթույլատրելիությունը, բայց - առանց մերժելու «էքզիստենցիայի» իմ թարգմանությունը որպես «արտա-կայություն» և առանց որևէ լրացուցիչ փաստարկ բերելու – հակառակն է պնդում, բավարարվելով արձանագրությամբ, որ թարգմանությունները «վիճարկելի են» (նույն տեղում):

դ/ Եթե իմաստ ունի ընդհանուր դիտողություն անել ատենախոսության մեջ զարգացված հղացքի մասին, կարելի է նշել դրա *մտահայեցողական* բնույթը: Տպավորությունն այն է, որ հնարավոր է սավառնել բոլոր ուսմունքներից և հղացքներից վեր և հավակնություն ունենալ՝ այդ ամենն ի մի բերելով, ստեղծել մի *մետապատմություն,* որի դրույթներն

ընդունելի են բոլորի համար: Սակայն, պետք է խոստովանել, որ այդ տպավորությունը զգալիորեն մեղմվում է, երբ հեղինակը նշում է, որ իր առանձնացրած չորս հայեցակերպերի միասնությունը կարող է նվաճվել գիտական բանավեճի ընթացքում: Հարցը, այսպիսով, տեղափոխվում է գործնական ոլորտ և դրանով իսկ լիովին ընդունելի դառնում: Այդ մոտեցումը մասամբ հիշեցնում է Շլայերմախերի այն միտքը, որ բոլոր փիլիսոփայությունների միասնությունը հնարավոր է միայն որպես փիլիսոփաների գործնական հաղորդակցություն «Կաճառում» (Ակադեմիա):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերջին դիտարկումս, որը փաստորեն նաև աշխատանքի արժևորում է նշանակում, լրացուցիչ հիմք է տալիս եզրակացնելու համար, որ վերը ներկայացված դիտողությունները չեն նվազեցնում ատենախոսության արժանիքները և նրանում ստացված արդյունքերը: Դավիթ Ռոմիկի Մոսինյանի «Պատմության փիլիսոփայական հայեցակերպերի մեթոդաբանական վերլուծություն» ատենախոսությունը ինքնուրույն կատարած ավարտուն աշխատանք է, որում հիմնավորված դրույթները անկասկած գիտական արժեք են ներկայացնում և կարող են օգտակար լինել ոլորտում հետագա հետազոտություններ իրականացնող մասնագետների համար:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է հետազոտության բովանդակությանը և ընդգրկում է նրա հիմնական թեզերը և արդյունքները: Սեղմագրի որոշակի վերացականությունը լրացվում է ատենախոսության մեջ առկա կոնկրետ նյութով: Ատենախոսության և սեղմագրի ձևավորումը համապատասխանում են ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հրապարակումներում:

Հաշվի առնելով վերոհիշյալը, գտնում եմ, որ Դավիթ Ռոմիկի Մոսինյանի «Պատմության փիլիսոփայական հայեցակերպերի մեթոդաբանական վերլուծություն» ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգին և ՀՀ ԲՈԿ-ի կողմից դոկտորական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակն արժանի է Թ.00.01 «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ փիլիսոփայական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Փիլ. գիտ. դոկտոր, Հայաստանի Ամերիկյան համալսարանի դասախոս

Աշոտ Ոսկանյան

«Ա. Ոսկանյանի ստորագրությունը հաստատում եմ»:

Երևանի պետական համալսարանի
գիտական քարտուղար Մ. Վ. Հովհաննիսյան

22.10.2024